

# ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՊՐԻԼ 1, 1898. ԹԻՒ 6 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 100

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՔԻ տարեկան բաժանորդագրին է երկու տոյար, կամ 10 ֆրանք, (4 րուպլի), ամեն երկրաց համար:

Հասցէ— Editor of Haik,  
341 West 23rd St. New York

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական նշմարք.—Ռուսիա իմէ տարբերութիւն ունի Արեւմտեան Եւրոպայէն.—Հայրապետիմ արդիւնաշատ պտոյտը.—Նամակ Քլոնտայքէն.—Նամակ Պոսթոնէն.—Որբերը.—Վիճակագիր Ամերիկայի հայոց. Փրովիտէնս, Քոնքորտ.—Այլևայլք.—

## ԽՄԻՆԳՐԵԿԱՆ ՆՇՄԵՐՔ

ՀԱՅՔԻ հրատարակութիւնը աւելի ճոխ և օգտակար գործելու նպատակաւ ընկերութիւն մը կազմուելու վրայ է: Այս պատճառով յաջորդ թիւը, որ նոր Շրջան մը պիտի սկսի, պիտի հրատարակուի Մայիսի մէջ կամ դուրսէ քիչ մ'աւելի ուշ, պատրաստութեանց աւելի կամ նուազ շուտով կատարելագործուելուն համեմատ:

Միացեալ Նահանգաց և արտասահմանի մեր բաժանորդները որքան շուտով նորոգեն իրենց բաժանորդագրութիւնը՝ այնքան աւելի փութացուցած պիտի լինին նոր շրջանի սկզբնաւորութիւնը:

Վերջին երկու ամիսներս քանի մը տասնեակ Հայեր Ամերիկայէն վերադարձան հայրենիք: Լուր առնուած է թէ առանց կառավարական նեղութեանց հան-

դիպելու հասած են իրենց բնավայրերն: Երբ այս լուրը վերահաստատուի, հաւանորէն շատ աւելի մեծ թուով Հայեր պիտի չուեն դէպ Հայաստան: Ամերիկայի մէջ մեր գործաւոր հայրենակիցներու վիճակը նախանձելի չէ. շատք անամուսին են և զուրկ ընտանեկան մխիթարութիւններէ. գործարանի մէջ ծանր կ'աշխատին և իրենց բնակարաններուն մէջ ալ զոնէ տարրական հանգստութիւն մը չեն վայելեր: Ու երբ այս վիճակ տարիներով կը տևէ, բնական է որ ծանձրանան և փոփոխութիւն մը փորձել ուզեն առանց շատ մտածելու ապագայ վտանգներու մասին որ կրնան ծագիլ երբ թուրքք Ռուսիոյ հետ պատերազմի մը բռնուելու վրայ գտնեն իրենք զիրենք:

Հայաստանի այլևայլ գաւառներէն հասած մասնաւոր նամակներէ կ'իմանանք թէ Բամազանի առթիւ Թուրքերն սպառնալից դիրք առած, հրացանաձուլութիւններ արած և շատ զարհուրեցուցած են Հայերն:

ՌՈՒՍԻԱ ԻՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԷՆ

Վարսաւի Համալսարանին ուսուցող պետներէն մին, F. Sigel, կարեւոր ուսումնասիրութիւն մը հրատարակած է Annals of the American Academy of Political and Social Science Հանդիսին Մարտի թուոյն մէջ, «Ընկերային հայեցողութիւններ և ռուսական պայմանք» խորագրով: Այս յօդուածով դէմ կ'ելնէ նա գերման Gumploviczի այն կարծեացը թէ Եւրոպա բաժնուած է երկու աշխարհի, խորապէս



տարբեր իրարմէ. արեւմտեան Եւրոպա իւրեք քաղաքակրթեալ ամբողջ մը հակադրեալ լինելով Ռուսիոյ, և թէ առաջինը պարտի ջանալ արգելել վերջնոյս ծաւալումը, չթողուլ որ սա Պոլիս գայ, զատել Ռուսիայէն զՊոլիսիա, Ռուսմանիա, Բոլոնիա և Ֆինլանտ, և այսպէս պարսպել զԵւրոպա ընդդէմ ասիական բարբարոսութեան:

Յօդուածագիրը երկարօրէն կը բացատրէ թէ Ռուսիա կարծուածին պէս բռնապետական կայսրութիւն մը չէ եղած, թէ ժողովրդային զանգուածին և Ձարին միջև եղած չեն ազնուապետական և կղերական անջատիչ կազմաւորութիւններ ի Ռուսիա ինչպէս եղած են յԵւրոպա — թէ հիւսիսային Ռուսիա երկար ատեն ունեցած է հանրապետական ձև կառավարութեան, Իւան Դ, Սոսկալին, 1548 ին երեսփոխանական ժողով գումարած է: 1613 էն ց 1615 ժողովը կառավարած է զպետութիւնը, Ձարն դեռահաս լինելով: Այս խորհրդարանական կարգը տեւած է ի Ռուսիա մինչև ցերկորդ կէսն ժէ դարու:

Հեղինակը կը ցուցնէ ապա թէ ազգային երեսփոխանութեան բարձումը արդիւնք էր ոչ ռուսական ժողովրդի ինքնավարութեան անընդունակ լինելուն, այլ արտաքին պարագայից: Պետութեան աստուածացումը Բիւզանդիոնէն եկած է ի Ռուսիա՝ յոյն եկեղեցւոյն հետ: Կամաց կամաց կղերին ազդեցութեան տակ ծաղկած է այն գաղափարն թէ մեծ դուքսերը պետութեան բացարձակ ներկայացուցիչն են: Մոնկոլներու յարձակումն ալ զօրաւոր կառավարութիւն մը հարկաւոր դործած է և պատերազմներուն տուած է կրօնական բնութիւն: Այսպէս միացած են եկեղեցի և պետութիւն:

Հիմա Ռուսոյց մշակեալ դասը չի համարիր թէ Արեւմտեան Եւրոպիոյ խորհրդարանական կարգերը յաջող են: Այժմու Ազգային ժողովը չ'երեւիր լինիլ լաւագոյն եղանակը որով ընկերութիւնը մասնակցի կառավարութեան: Հեղինակը կը կարծէ թէ Աղեքսանդր Բ և Գ կայսերաց օրով աննշմարելի կերպով երեսփոխանութեան նոր եղանակ մը երեւան ելնել սկսած էր, այն է օրինաց քըննութիւնը այն անձանց ձեռքով զորս կառավարութիւնը կը կոչէր ընկերութեան

ծոցէն, վասն զի անոնցմէ կրնար սպասել ամենալաւ խրատը: Գերմանացի Ահրէնս և Բօտէր արդարեւ սկսած են վարդապետել թէ փոխանակ սովորական երեսփոխանութեան պէտք է որ ընկերային խմբերն ներկայացուցիչ լինին, որք կը զբաղին արուեստով, գիտութեամբ, ճարտարարուեստութեամբ և այլն, որպէս զի ազգին զանազան շահերը և զանազան գործող չըջանները ներկայացուած լինին: Ուրեմն կրնանք յուսալ թէ ի Ռուսիա կամաց կամաց երևան պիտի գայ երեսփոխանութեան ամենէն գործնական տեսակը որ բաղձալի կը թուի Եւրոպիոյ ամենէն զարգացած մաքերուն:

### ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

#### ԱՐԴԻՒՆԱՇԱՏ ՊՏՈՅՏԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ի Տըփղիս և Բագու վերջին այցելութեան ժամանակ նորօրինակ կերպով մը հարուստ Հայերը պատուեցին Նորին Վեհափառութիւնը: Բագուի խոշոր նաւթագործները Հայրապետին իրենց այցելած պահուն խոստացան այն աւուր ամբողջ արտադրութիւնը նուիրել Հայ տառապելոց և բարեսիրական հիմնարկութեանց: Տիար Առաքել Ծատուրեան Փետր. 9 էն ց 15 արտադրուելու ամբողջ նաւթային Հասոյթը նուիրած է, նուէր մը զոր պիտի կրկնէ ամեն տարի: Տեարք Միքայէլ Արամեան և Համբարձում Մելիքեան նուիրած են իւրաքանչիւրը մէկ աւուր արտադրութիւն: Լալայեան Տիար Կարապետի տունը արուած խնճոյքէն յետոյ Օրիորդ Լալայեան յոտս Հայրապետին կը դնէ փոքրիկ արկղ մը 5,000 բուլակի բովանդակութեամբ: Այս բարեսիրտ նուիրատուներն լաւ կը հասկնան ազգի Հայրիկի հոգին որ կրնայ բացատրուիլ սապէս. «ինչ որ իմ զաւակներուս անէք, ինձի տրած կը լինիք:»

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

LUNIVERS ET SA FORMATION, 103 երեսէ բաղկացեալ և Փռանսերէն լեզուով աշխատասիրութիւն Տոքթոր Տաղաւարեանի: Կ. Պոլիս, Տպարան Մատթէոսեան, 1898:



## ՆԱՄԱԿ ՔԼՈՆՏԱՅՔԻՆ

Ֆրէզնոյ, Մարտի 20, 1898.

Նախորդ Յուլիոսին՝ տեղէն Քլոնտայք ուղեւորող բազմաթիւ անձանց հետ գացին նաև 3 Հայեր, որոց երկուքը Քանատայի գծով ուղեւորեցան և միւսը Ալտաքայի կամ «Չիլքոթ Փասս»ի գծով: Առաջիններն տակաւին հասած չեն, վերջին ատեններս եկած նամակներէն տեղեկացանք որ Քլոնտայքի 200 մղոն մնացած ստիպուած են կանգ առնուլ՝ անհնար ըլլալով աւելի առաջ երթալն, թէ թանձր ձիւնին և տակաւի ցուրտին և թէ իւրեանց ձիերը սառած կամ կորսուած ըլլալուն պատճառաւ: ամենէն վերջի նամակն որ հասաւ իրր երկու շարաթ առաջ, կ'իմացունէ թէ շուներ գնած են ու կը պատրաստուին իւրեանց ճանապարհը շարունակել:

Գալով «Chilkoot pass»-ի գծով ուղեւորողին, ողջամբ հասած է սոսկոյ դաշտերն: Բայց թէ որպիսի նեղութիւններ տառապանքներ ու սոսկալի դժուարութիւններ կրելով՝ շատ երկար է պատմելն կը գրէ:

«Juneau»-էն մինչև «Lake Bennet» ուղեւորութիւնը սոսկալի եղած է. «Dyea»-էն (Juneau նաւահանգիստէն 20 մղոն դէպի Հիւսիս) մինչև աստ (Lake Bennet) ունեցածնիս փոխադրած ենք մեր ուսերուն վրայ բեռցած: Այդ օրերն միշտ կը ձիւնէր, կ'անձրեւէր և սոսկալի ցուրտն անպակաս էր: առաւօտէն մինչև երեկոյ 12 ժամ շարունակ ստիպուած էինք քալել ու քաշկռուտիլ ցեխոս, քարոտ անցքերէ ու վեր մագլցիլ սուր ու ցից ապառաժներէ, մի մոռնաք թէ 100 լիպրա բեռ ունենալով մեր ուսոց վրայ... Chilkoot Pass-ի գագաթն այնպիսի սոսկալի հով մը կը փչէր որ կը ստիպուէինք պառկիլ տիղմի ու ձիւնի մէջ հովէն չքըշուելու համար: այդու հանդերձ շատ մը անձինք տեսայ որոնք կարծելով դիմադրել հովին, կը շարունակէին ճանապարհն ու կը զարնուէին՝ իւրեանց ծանր բեռներով ժայռերու, ու կը խորտակէին իւրեանց քիթն ու գլուխը կամ կը վիրաւորէր ճակատ, աչք ու մարմնոյ ո' և է մէկ մասն...: Անցեալ ամիսէն մինչև ցայժմ մեր հանգերձներն բնաւ չորցած չեն, ամեն առաւօտ ժամը 4½ին ստիպ-

եալ ենք հագնիլ մեր նախորդ օրուան թաց զգեստներն, այդ է ահա ամենէն սոսկալին որ այդչափ նեղութիւններէ ու յոգնութիւններէ վերջ մեր թաց զգեստներով թաց անկողիններու մէջ կը պառկինք հաճախուհիւ... Այս ուղեւորութեան մէջ այնպիսի ժամեր ունեցած եմ որ բնաւ չպիտի ուզէի յանձն առնուլ ի փոխարէն հազարաւոր տալերներու: շատ անգամ ըսած եմ «անիծեալ ըլլայ այն ոսկին որ այսպիսի չարչարանքներով ձեռք պիտի բերուի»...: Ծամբուն երկայնութեամբ կարդաւ կը քալեն հարիւրաւոր ուղեւորներ չալկած տանելով իւրեանց բեռներն: այդչափ բազմութեան մէջ ոտնաձայնէ զատ ուրիշ ձայն չի լըսուիր: ոչ խօսք, ոչ երգ և ոչ իսկ սուլում մը: ամեն ոք դուխը խոնարհած, քրտինքի մէջ ողողուած ծանր ծանր տընքալով ու հեւալով կը քալէ ու կը քալէ: Ծիծաղ մը, ժպիտ մը չի տեսնուիր բռնաւ, ո և է մէկու դէմքին վրայ: Բայց իմ ծիծաղը կը շարժի երբ կը տեսնամ հաղարաւոր տեսակ կաղալու ու գայթեւու ձեւեր որոնք նկարչի մը համար հարուստ նիւթ կրնային լինիլ...: «Այսօր նաւակ պիտի նստիմք բայց հովը հակառակ է ու ստիպուած եմք սպասել մինչև առաւօտ, այդ առթէն օգուտ քաղելով մեծ կրակ մի վառեցինք ու մեր հանդերձներն ու անկողինն կիսով չափ չորցուցինք: Մեք բազդաւոր եմք աստ հասնելնուս, ճանապարհի վրայ կան հարիւրաւորներ որոնք երկու ամսէ ի վեր կը ճամբորդեն ու դեռ չեն հասած և հարիւրաւորներ որոնք ունեցածներին ծախելով ետ գացին ճանապարհի նեղութեանց ու ցուրտին չդիմանալով...: Ծանապարհին հարիւրաւոր բեռնակիրներ օրական \$15—25 կը չինեն իրենց կրած բեռնի համեմատութեամբ, մէն մի լիպրայի փոխադրութեանն համար 2—6 սէնթ կը վճարուի իւրաքանչիւր մղոնին: բեռնակիրներէն շատեր անցեալ 2 ամսուան միջոցին \$1000 ականէն աւելի վաստակած են բայց չէք կրնար երեւակայել թէ որպիսի տաժանելի չարչարանքներ կրելով »

«...Հոս հասնելէս ի վեր կը գործեմ ժամը \$1ի: գործս դժուարին է բայց ցուրտին սաստկութիւնը չի թողուր անոր վրայ մտածելու: վերջին շարաթը ջերմաչափն 50—58 գերօէն վար ցոյց կու-



տար. ականջ, ձեռք և ոտք կը սառնին: Այդ վտանգէն ազատ մնալու համար ամենահաստատուն հանդերձներով պատուարած եմք մասնաւորապէս քիթ, ականջ, ձեռք ու ոտք: 3—5 զոյգ ամենահաստատուն գուլպաներ կը հագնինք այս տեղի համար պատրաստուած. անոնց վերայէն «մաքիսըն» ըստուած տրեխի նման կօշիկ մը և անոր վրայէն թանձր շորեր փաթաթուած, այնպէս որ ոտքերը իւրեանց գլուխին կրկին մեծութիւնը կ'ստանան և այս վերջինն ալ իր բնականին կրկին մեծութիւնն ստացած է բրդեայ կտորներով փաթաթուած. նոյն համեմատութիւնն ունին նաև մարմնոյ միւս մասերը. հապա այն անտանելի «թնոցները», (բուրդէ շինուած կտոր մը զոր քթերուն կ'անցունեն) անճոռնի կենդանիի մը պատկերին կը նմանցունէ զմեզ...

Առաւօտեան ժամը 8 ին գործի կը սկսինք մութին մէջ, ժամը 10 ին արշաւոյսը կը սկսի և 12 ին հազիւ Արևը կը ծագի Հարաւէն (եթէ կարելի է Արև անուանել ահագին կարմիր ու տեղայն գունդ մը) ու մէկ ժամ վերջ այդ գունդը կը գլորի դարձեալ հոն ուրկէ ելաւ: Ժամը մինչև 3½—4 կը գործենք վերջաւոյսի մթնշաղ լոյսով ու մէկ ժամ ալ դարձեալ մութի մէջ. ժամը 5 ին կը ձգենք գործերնս: Օրուան մէջ 8 ժամ կը գործեմք կէսը մութի ու կէսը մութ—լոյսի մէջ. աւելորդ է ըսել թէ օրերու ամենէն կարճ եղանակին մէջ կը գտնուինք: Նրկու օր է կը ձիւնէ և օդը մեղմ է. օդին այս անմիջական փոփոխութենէն շատեր տեսակ մը սոսկալի հազէ բռնուած են որուն ես ալ ենթակայ եղայ ու երկու օրէ ի վեր չեմ գործեր:

Այս աշնան տեղս եկող հազարաւոր անձինք չափէն աւելի էին, ոմանք բաղդ ունեցան գործ գտնալու, իսկ մնացեալներն ստիպուած են թողուլ ու ետ դառնալ սառի վրայով դէպ ի Juneau կամ «Ծօրթ—Իւզօն», անօթութենէ չմեռնելու համար, բայց կը վախցուի թէ ճանապարհին ցուրտէն մեռնին: Մղոններով տարածութեամբ գտնուած հանքերուն քիչերն են որ կը վճարեն աշխատիլ, թէև ոմանք ալ չափէն աւելի կ'արտադրեն. այս վերջինները ամենքն ալ իւրացուցուած են. նոր տեղեր գտնալու համար պէտք է ամիսներով փնտռել, իւր կռնակին վրայ կրելով ամբողջ ուտելիքն անկողինն ու

գործիքներն, գտնուէ վերջն ալ հանած ոսկիին կէսէն աւելին պարտաւորուած են վճարել կառավարութեան: Շատեր կը կարծեն թէ Բլոնտայք խիստ հարուստ է և տակաւին կան հարուստ հանքեր չի գտնուած. բայց եթէ կան գալ փափաքողներ՝ խարհուրդ կուտամ որ չգան կամ գոնէ հազար տոլարէն պակասով ճամբայ չեւլան, դրամ որչափ չատ ունենան այնչափ աւելի հաւանական է յաջողութիւնն:

### Ե. Մ. ՆՇԻԿԱՆ

Պոսթոնէն կը գրեն մեզ—

Աստ կուսակցական կռիւ կամ վէճ դադրած է, բայց խաթեր համար յաջորդած է կրօնականը: Հայոց որ ճաշարան որ մտնես, ուրիշ բառ չես լսել եթէ ոչ «լուսաւորչական», «բողոքական» և «վարդապետ» բառերը: Այս 3 շարաթուան մէջ 4 անգամ հոգարարձուական ժողով եղած է որոշելու համար թէ Արժ. խաղ վարդապետը Պոսթոնի և չրջակայից համար պիտի պահէն թէ ոչ և տարեկան ո՞րչափ պիտի տան: Այս ժողովները, ուր կային 7 տեղի ներկայացուցիչները, չի կրցան եզրակացութեան մի գալ:

Քամրիճի պատգամաւորը կ'ըսէ թէ, Քամրիճի ժողովուրդը թէև խաղ վարդապետին ուէ գարծունէութիւնը տեսած է, բայց առարկութիւն մ'ալ չունի:

Լինի ներկայացուցիչը կ'ըսէ թէ Լինցի ժողովուրդը կ'ուզէ խաղ վարդապետը պահել եթէ նա կ'ընդունի գործել Մայթոնց վարդապետի հովանաւորութեան տակ:

Չլսի Հոգ. Ընդհանուր ժողով կազմեցանք. թէև մեծամասնութիւն չի կար, ճաշարաններն ու տունները պատեցանք, ժողովուրդի կարծիքը առնելու համար թէ խաղ վարդապետը կ'ուզէն պահել թէ ոչ: Ժողովրդի մեծամասնութիւնը թէև կ'ուզէ վարդապետ մը, բայց ոչ զխաղ վարդապետ:

Ատենադպիրը կ'արձանագրէ— Չլսի անհատի մը կարծիքն է թէ ժողովուրդի մեծամասնութիւնը չուզեր զխաղ վարդապետ:

Վերոյիշեալ խեղաթիւրուած արձանագրութեան դէմ բողոք եղաւ և բարեփոխուեցաւ:

Վերջապէս 7 տեղերէ 4 ը կուզեն պահել զխաղ վ., իսկ 3 ը չեն ուզեր:

Գնէլ



ՈՐԲԵՐԸ

Խմբագիր ՀԱՅԲԻ,

Ուրախ եմ որ Ամերիկայի մէջ որբերու խնդիրը ամեն տեղ օրուան խնդիրն եղած է:

Երբ հայրենիքն էի, սոսկալի դէպքէն ետքը բարեկամիս մէկուն տունը գնացի որն որ սպաննած էին: Յիշեալը քանի մը որբեր թողած էր. երեք տարեկան տղան գլուխը շարժելով քովս եկաւ. Աղաւաճ, ըսաւ, գիտե՞ս, Տաճիկները եկան մորթեցին հայրիկս, վաղը ես մեծնամ նէ սուր դաժակ մը առնելով Տաճիկը մոռթեմ, մոռթեմ:

Ասիկա յիշելով կ'ուզեմ ցուցնել թէ մեր պատկերներուն ալ մտքին վրայ անջնջելի ապաւորութիւն թողած են ջարդերը. մեծցնենք ուրեմն անոնք, անոնք պիտի ըլլան մեր ազգին պատուոյ վրէժ-խնդիրները:

Մեր մարտիրոսները իրենց գերեզմաններուն և փոսերուն մէջէն գլուխին վեր առնելով մեզ կը բողոքեն— ո՛ղջ մնացող Հայեր, ի՞նչ կ'ընէք. գոնէ մնացած որբերը, մեր անուշիկ պատկերները հոգացէք, կրթեցէք, կ'ըսեն:

Լսեցէք, հայ տիկիներ, լսեցէք Հայեր, և այս գործին տուէք ձեր բոլոր կարողութիւնը:

Հըտսըն

Գ. Յ. ՊԵՇԿԵՕԹԻԻՐԵԱՆ

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԼԶ. Փրովիտէնս

Խմբագիր

Ձեր խնդրած վիճակագիր արդարեւ իւրաքանչիւր ազգայնոց ուրոյն անուամբ, տարեօք, գաղթման թուականաւ, արհեստով, դաւանութեամբ ևն. ևն. մանրամասնօրէն արձանագրած եմ ի տոմարին, սակայն առ ոյժ մ գրադմանցս առթիւ չկրնալով մանրամասնաբար գոհացում տալ Ձեր մեծութեան խնդրանաց, կուգամ ներկայիս գէթ որոշ գաղափար մ'ընծայիլ համառօտիւ:

Փրովիտէնսի մէջ կան առ այժմ 520 գաղթական ազգայինք, մեծ մասամբ ամուրի. 38 ընտանիք կազմողներ կան առանձին բնակութեամբ: 4 Հայ՝ ընդ ամերիկուհիս ամուսնացեալք, որոց համար

նշանակութիւն չունի դժբաղդաբար ազգային և կրօնական զգացում, և ընկերական պարտաճանաչութիւն: Գործաւորական կեանքէ դուրս, սակաւթիւ են առանձին գործ և զբաղում ունեցողներ, որոց թիւը գրեթէ 44 ի կը հասնի հետեւեալ եղանակաւ:

Մի տարուան համար վարձուած է նաև բաւական ընդարձակ ժողովարան մը չորս հարիւր տողարի, ուր կիւրակէ առաւօտներ եկեղեցական արարողութիւն կը կատարուի, և երեկոյներ Ազգ. Ընդհանուր Ժողով տեղի կ'ունենայ: Ունի առանձին Հոգաբարձութիւն 12 անդամէ բաղկացեալ և ժողովարանի մասնաւոր կարգադիր Յանձնախումբ մը 7 անդամէ. առաջնոյ պարտականութիւնն է ազգային ընդհանուր գործոց բարեօք մատակարարութիւնն, իսկ վերջնոյն՝ կիրականօրեայ ընդհանուր ժողովոյ կանոնաւորութեան հսկել:

Գրեթէ չորս տարիէ ի վեր հաստատուած է Ազգ. Գրադարան մը՝ շնորհիւ ուսու մնասիրաց ոմանց. ունի այժմ մօտ 500 կտոր գրքեր ազգային և պատմական՝ մասնաւորապէս Ռաֆֆիի վէպերուն և Ալիշանի երկասիրութեանց փոյթ կը տարուի:

Գրադարանը գետեղուած է ազգային ժողովարանին մէջ, ուր կիւրակէ երեկոյներ երկու ժամ յատկացած է ժողովրդեան ընթերցման: Ունի առանձին Գրադարանի վարչութիւնն չորս անդամէ բաղկացեալ, որոց ուսու մնասիրական զգացումն արդարեւ գոհունակութեան արժանի է:

Երկու խօսք ալ տեղւոյս հայ գաղու-թին բարոյից և կացութեան մասին:

Արդարեւ Փրովիտէնս բաղդատմամբ շատ տեղերու պարտաճանաչ և հանդարա է, զոր խոստովանիլ ճշմարիտ պարտականութիւն կը համարիմ սակայն ոչ գոհացոյցիչ. մանաւանդ ազգային զգացման տեսակէտով, գրեթէ մէկ չորրորդ մասն անօրինակ թմրութեան, անզգայութեան աստիճանին է հասած. իսկ ազգասիրութիւն բաւը՝ սովորաբար մանաւանդ ոմանց կարծեցեալ յեղափոխականաց բեր-նին մենաշնորհն է եղած, և շատ աժանցած. կ'ըզամ թէ ալաշընիլ զայնս մեծ զօրութեան և աշխատութեան կը կարօտի, այսու հանդերձ յուսով եմ որ ժամանակն



և պարագայք կ'ուղղեն զայնս. մէկ մասին՝ գիտակցօրէն կեանքն և արժանավայել ընթացք մխիթարութիւնս են եղած:

Յարգական սիրով աղօթարար  
ՎԱՂԻՆՍԿ ՎԱՐԴԱՊԵՏ  
ՍԻՍԱԿԵԱՆ

\* \*

Քոնքորտէն կը գրեն մեզ.—

Տէր Խմբագիր ՀԱՅՔԻ,

Concord, N. H. քաղաքիս գաղութը քսանութեց անձէ կը բաղկանայ. երեք կին և երեք աղջիկ կայ: Այս փոքր գաղութն ալ ունեցաւ իր Որբախնամ Խմբակը, տասն և մէկ անձերէ բաղկացեալ: Մի ժողով ունեցանք, մասնաւոր նպատակ ունենալով որոց խնդիրը: Հանգանակութիւն բացուեցաւ, ամեն մասնակցեցանք, և յետոյ անմիջապէս շարժական գրողներ եղան ժողովի մէջէն, կազմուեցաւ և Որբախնամ Խմբակը: Երեսուց հանգանակութեան գումարը եղաւ \$36.75 և \$23.25 ալ արգէն գոյութիւն ունեցող աղքատաց գանձանակէն եղաւ, և այս վաթսուն տարեը յանձնուեցաւ Խմբակին: Ժողովը փակուեցաւ գոհ սրտով: Հետեւեալ օր մեր Ամերիկացի գործաւոր ընկերներէն հանգանակեցինք \$10.10 և \$3 ալ հայ անցորդ մը նուիրեց, այժմ բոլոր դրամն է \$73.10 գոր պիտի դրկենք Կ.Պոլիս, Ս. Պատրիարքին: Մեր Խմբակին անդամոց մին երեք տարեկան մի աղջիկ է:

## ԵՅԼԵԻԵՅԼԻՔ

Սուլթանը զօրք կը կուտէ պուլկարական սահմանադրոյն վրայ իբր թէ Պուլկարիոյ հետ պատերազմի բռնուելու գիտում կամ երկիւղ ունենար. եթէ այդ երկու երկրաց միջև կռիւ բռնկի, հաւանօրէն Ռուսիա ևս պիտի յարձակի թրքաց վրայ. և երբ թուրքք Ռուսաց դէմ պատերազմելու կոչը լսեն Փատիլահէն Հայերուն նոր և վերջին ջարդ մը տալով պիտի սկսին, վախենք, իրենց կռիւը: — Ամերիկայի հայ երիտասարդներն չենք կրնար այս միջոցին քաջալերել հայրենիք վերադառնալու:

Գերմանիա իւր մարտանաւն ետ քաշեր է Կրէտէի ջրերէն:

Օրիորդ Չէյմպըրզ, ամերիկացի վարժուհի, Ուրֆայէն կը գրէ բարեկամի մը— Հոս 20 դպրոց ունինք 1479 սանով և 26 ուսուցիչով: Այս ամենուն վերատեսչութիւնն իմ վրայ է: Ունինք նաև երկու որբանոց՝ 55 աղջիկով և 69 փոքր աղով: Գերմանիայէն 4 միսիօնար, երկու մարդ և երկու կին եկան հոս որբեր հոգալու: Կնիկներուն մէկը Տախթօնա, տաղանդաւոր ոք է և այս պաշտօնին լաւ յարմարութիւն ունի: Ասոնք ալ որբանոց մը ունին: Մեծ չէնք մը չունենալով՝ հինգ տուն վարձած են, երեքը աղջկանց և երկուքը տղոց համար: Ունին նաև կարպետի գործարան մը ուր շատ մը այրիներ իրենց ապրուստը կը հայթայթեն աշխատելով: Կառավարութիւնը Չէյթունէն ծանր տուրք կը պահանջէ, բայց Չէյթունցիք չեն ուզեր սովորականէն աւելին տալ:

Տեարք Յակոբ Ոսկեան և Մանուկ Ս. Զիլինկիրեան, ուսանողք ի Փարիզ, յաջողած են Փռանսացի ուսանողներէ Յանձնախումբ մը կազմել որ հանգանակութեան մը ձեռնարկած է ինպաստ այն հայ ուսանողաց որք հետեւանօք հայկական աղէտներուն և ի չգոյէ դրամի, ի վտանգի էին կիսկատար թողլու իրենց համալսարանական ուսմանց ընթացքը: Հանգանակութեան առաջին ցուցակը 533 Ծրանքի եղած է:

«Մշակ» լրագիրը հրաման ձեռք բերած է ամենօրեայի փոխուելու փետրուարի 1 էն ի վեր և կը հրատարակուի շաբաթը հինգ անգամ:

Տիար Յ. Թաւշանճեան Հայոց ժողովի մը մէջ խօսեցաւ յաջողութեան պայմաններուն վրայ: Նիւթը շահեկան է և Տ. Թաւշանճեան հետաքրքրական կերպով խօսելու ձիրքն ունի: Գործի մէջ յաջողելու պայմաններուն վրայ փորձառարար խօսելու մասնաւոր յարմարութիւն մ'ալ ունի Տ. Թաւշանճեան որովհետեւ ինքը չնչին դրամագլխով մը գորգի վաճառականութեան սկսելով՝ բաղդատաբար քիչ ժամանակի մէջ, այսինքն 12 կամ 13 տարիներու մէջ խոշոր հարստութիւն մը գիւծ է, որ աւելի քան երկու հարիւր շիսուն հազար տոլար կը կարծուի:

\* \*



Հայոց Նիւ Եորքի Բարեգործական Ընկերութեան Գործադիր Ժողովոյ դէմ գանգատի արամադրութիւն մը մշակուած է մասնաւոր ջանք ունենալ, և այժմ չօշափելի ձեւ մը կը արուի այդ արամադրութեան: Գործաւորաց մէջ ստորագրութիւն կը ժողովեն եղբիւր անեակ մը հանրագրի տակ՝ որով բոլորք կը բառնան Գ. Ժողովոյ դէմ, որ իբր թէ յուսախար է արեւ սպասող, համբերող, տառապեալ գործաւորները:

Մեզի տրուած տեղեկութեանց նայելով Գործ. Ժողովը շատ աշխատած է յարմար մէկը գտնել պաշտօնի կոչելու իբրեւ ընդհանուր գործակատար կամ քարտուղար Labor Bureau ի, բայց պատճառունի այդ ընտրութիւն չափազանց աճապարանքով շանելու, վասն զի ընկերութեան օգտակարութիւնն ու յաջողութիւնը առկէ կախում պիտի ունենայ գլխաւորապէս: Լաւ և տեսական հիմնարկութիւններն փամաց կամաց կը կազմուին, և պէտք չէ որ մեր պարզամիտ ժողովուրդը պոռոտախօս և թեթեամիտ որոմնացաններու ականջ դնէ:

Արդումանեան անուն դերիտասարը Նիւ Եորքի հայեվար շարաթաթերթին մէջ նամակ մը հրատարակած է, իբրեւ անդամ Բարեգ. Ընկերութեան Գործ. Ժողովոյ, բողոքելու այդ դոյն Գործ. Ժողովոյ դէմ: Հայու յատուկ քաջութիւն է դա, օտարաց անծանօթ: Օտարաց մէջ մեծ անագնուութիւն կը համարուի որ ժողովոյ մը անդամը ելնէ հրապարակաւ պարսաւէ իւր ընկերները: Կրնայ անոնք քննադատել ժողովոյն նստերուն մէջ, բայց ոչ թէ երթալ դուրսերը անոնք պարսաւել, հարուածել, դատապարտել: Ատոր կ'ասեն բամբասանք: Պրն. Արդումանեան այդ ապօրէն արարքով ինքզինք կտրած է Ժողովոյ անդամակցութենէն, և լաւ կ'անէ որ փութայ հրաժարիլ, եթէ չ'ուզիր որ հրաժարումը աւելի անհաճոյ գործողութեամբ մը կատարուի:

Գործ. Ժողովոյ կողմանէ Խմբագրութեանս յղուած է պաշտօնագիր մը որ շատ ուշ կը հասնի հրատարակուելու համար: Այդ թուղթ կը պարզէ թէ ինչ գործած է Ժողովը ցարդ և ինչ դժուարութեանց յաղթելու կ'աշխատի: Անտարակոյս Գործ. Ժողովն և իւր խորհրդակիցներն ամբաւ երախտագիտութեան

արժանի են իրենց անձնուէր ջանքերուն համար և կը յուսանք թէ իրենց գործը անվհատ յառաջ պիտի մղեն: Մեր ազգին մէջ առ այժմ գործիչ լինիլ, նոյն իսկ լոկ բարեգործութեան գործիչ լինիլ՝ չէ կարելի առանց բամբաստուելու, առանց կոյր ապերախտութեան հանդիպելու: Այս հասկացողութեամբ թող յառաջ երթայ Գործ. Ժողովը:

\*\*\*

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՐԱՅՅԻԻ

ՍԵՄՈՒԷԼ

ՊՍՏՄԱԿԱՆ ՎԷՊԸ

Ա. Բ. ԵԻ Գ ԳԻՐԲ

ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԿԵՐՈՎ:

ԳԻՆՆ Է 7 ՀԻԼԻՆԳ

Իսկ «ԴԱԻԹ ԲԷԿ» հատոր Ա. Բ. և Գ. վերջաբանով և «ԿԱՅԾԵՐ» Հ. Բ. լիակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարւոյ ընթացքում, որոց բաժանորդագրութիւնը շարունակուում է: Երկու գրքի միասին բաժանորդագինն է, 10 չիլինգ: Լոյս տեսնելուց յետոյ 14 չիլինգ: Ցանկացողները թէ «Սամուէլ» ի և թէ Րաֆֆիի միւս երկերի համար, կարող են դիմել այս հասցեով. —

Mme. Raffi

270, Uxbridge Road, Shepherd's Bush  
London WJ

\*\*\*

ՇԱՐԺՈՒՄ

Լրագիր Ազգային Քաղաքական և Գրական կը հրատարակուի իվառնա, Պուլկարիա, շարաթն երկու անգամ: Տարեկանն է 12 ֆրանք:

ԹԼՆԿ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին ձեռագիրներ (manuscripts) և դրամներ կը գնենք, ինչպէս և ուրիշ պատուական հնութիւններ: Մեր վաճառատունն է իթիւ 390 5th Ave., Նիւ Եորք.

ՏԻԳՐԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ:

\*\*\*

Հեռագիր մը ծանոյց թէ Բագուի Մանթաշեան Հայ վաճառատունը իւր քարիւղական սեպհականութիւնը անգլիացւոյ մը վաճառած է երեք միլիոն հինգ



հարկը հազար լիրայի: Այս կը ցուցնէ  
թէ Հայերը ճարտարարուեստական այդ  
ընդարձակ ասպարէզէն քաշուելու կը  
միտին, միտում տիրուր և չարագուշակ:

Արեւելագէտ վամպէրի ինտիմէն-  
տէնթի մէջ յօդուած մը հրատարակած  
է որով զՍուլթանը իստիւ կը քննադա-  
տէ, զայն համարելով երկրին ներկայ  
տագնապալից վիճակին պատճառը:

\* \*

## Ե. Մ. ԳԵՐԵԱԿՕՋԵԱՆ

Տունը կը վաճառէ օսմանեան ու-  
կուով փոխանակագիր Կ. Պօլսոյ վրայ: Գա-  
ղաքէն հեռու գտնուողը կարող են դրա-  
մը շրկելով փոխ-գիրը ստանալ:

Փօխ-գիր կը տրուի մեծ թէ փոք-  
գումարներու համար, ի տես վճարելի:

Հասցէ—

A. &amp; M. KARAGHEUSIAN,

365 B. WAY

New York, N. Y.

\* \*

## ՀԱՅ ՆԱԿԱՐԻՉ

Մ. Գ. ՍԵՐԱՅԼԵԱՆ

ARARAT FINE ART STUDIO,

Տնօրէն Արարատեան դեղարուեստա-  
կան արուստանոցին (Studio) ի Շիքակօ,  
կը ծանուցանէ թէ ամեն տեսակ կենդա-  
նագիրներ և տեսարաններ, սե կամ գու-  
նաւոր բէսթէլ, ջրաներկ և իւղաներկով  
կը պատրաստէ, լուսանկարէ կամ կեանքէ  
օրինակելով արտասահմանի Հայեր ևս  
կրնան թղթակցիլ:

Հասցէ

M. K. Serailian  
42 Central Music Hall,  
Chicago, Ill.  
U. S. A.

\* \*

## AMERICAN EXPRESS CO'S MONEY ORDERS FOR ARMENIA.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՂԻՉ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ՄԸՆԻ ՕՐՏԸՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

### ՊԱՅՄԱՆՔ

|              |      |        |
|--------------|------|--------|
| ոչ աւելի քան | \$5, | 5 սէնթ |
| » » »        | 10,  | 8 »    |
| » » »        | 20,  | 10 »   |
| » » »        | 30,  | 12 »   |
| » » »        | 40,  | 15 »   |
| » » »        | 50,  | 18 »   |
| » » »        | 100, | 30 »   |

\* \*

### ՀԵԾԵԼԱՆԻԻՔ ԽԱԼԱՃԵԱՆ

Ղազարոս Խալաճեան հմուտ հեծեւ-  
նիւ շինող, կ'ուզէ ծանուցանել թէ ո և  
է Հայ որ կը փափաքի այս արհեստն սոր-  
վիլ թող նամակակցի այս մասին որչափ  
չուտով որ կրնայ: Բայիս ամսէն սկսե-  
լով Ղազարոս Խալաճեան վեց ամիսէն  
կատարեալ պիտի սորվեցնէ Պոսթոն քա-  
ղաքին մէջ յիշեալ արհեստը: Նամակ-  
ները կրնաք յղել—

Mr. Lazarus S. Kallajian

13 W. Adams St., Jacksonville, Fla.

և կամ

588 Shawmut Ave.,

Boston, Mass.

\* \*

### ԿԱԶՄՍՏՈՒՆ ԼԵՊԵՐՍԻ

Գիրք և տետրակ կը կազմենք ամեն  
տեսակ կազմով և չափաւոր գնով:

Մեր հասցէն է

Woolff Liebers,

104 and 106 W. 25th St.

New York.

\* \*

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7րդ Էվինիու

Նիւ Եորք

26րդ և 27րդ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

\* \*















